

Հավելված N 1

Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի
նախագահի 2024 թվականի 24.06. N 180-Ա հրամանի

**Ատենախոսությունների պաշտպանությունների կազմակերպման գործընթացում
ընդգրկված անձանց վարձատրության պայմանները և չափերը**

1. Մասնագիտական խորհուրդներում ատենախոսությունների պաշտպանությունների կազմակերպման գործընթացում ընդգրկված անձանց վարձատրության չափը (ներառյալ հարկերը և այլ պարտադիր վճարները) յուրաքանչյուր պաշտպանության համար սահմանել.

- 1) խորհրդի նախագահին՝ 7000 ՀՀ դրամ,
- 2) խորհրդի գիտական քարտուղարին՝ 20000 ՀՀ դրամ,
- 3) նախնական քննարկման հանձնաժողովի անդամներին (եռյակ)՝ - 7000 ՀՀ դրամ,
- 4) պաշտոնական ընդդիմախոսին՝

ա. թեկնածուական ատենախոսության պաշտպանության համար - 20000 ՀՀ դրամ,

բ. դոկտորական ատենախոսության պաշտպանության համար - 25000 ՀՀ դրամ:

2. Վճարումները կատարվում են տարեկան երկու անգամ, մասնագիտական խորհուրդների հաշվետվությունների (համաձայն N 1 Ձևի) հիման վրա, կնքելով պայմանագիր համապատասխան հիմնարկի հետ:

3. Հաշվետվությունը Բարձրագույն կրթության և գիտության կոմիտե է ներկայացվում տարեկան երկու անգամ.

- 1) մայիս-հոկտեմբեր ամիսների համար՝ մինչև նոյեմբերի 15-ը,
- 2) նոյեմբեր-ապրիլ ամիսների համար՝ մինչև մայիսի 15-ը:

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

(հիմնարկի անվանումը, մասնագիտական խորհուրդը)

20__ թ. _____ ժամանակահատվածում կայացած պաշտպանությունների մասին

Խորհրդի համարը	Դոկտորական ատենախոսությունների քանակը	Թեկնածուական ատենախոսությունների քանակը	Ընդամենը

Հ/Հ	Անուն, Ազգանունը	Գիտական աստիճանը	Պաշտպանությունների թիվը, որտեղ			Ընդամենը (հազ.դրամ)
			նախագահ է կամ գիտքարտուղար	եռյակի անդամ է	ընդդիմախոս է	

Հիմնարկի ղեկավար _____

(ստորագրություն)

Խորհրդի նախագահ _____

(ստորագրություն)

Կ. Տ.